

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

---

**ԼՐԱԲԵՐ**  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

**ВЕСТНИК  
ОБЩЕСТВЕННЫХ  
НАУК**

НАУЧНО-ОБЩЕСТВЕННЫЙ ЖУРНАЛ  
ԼՐԱԲԵՐ ԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

2(647)  
ՄԱՅԻՍ - ՕԳՈՍՏՈՍ  
МАЙ-АВГУСТ

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ

2016

ЕРЕВАН

ԹՈՒՐԲԱԿԱՆ ԳՅՈՒՄԱԼ ՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՍԱՖԱՐՅԱՆ Ա. Վ.

Թյուրքականություն (türkçuluk) ճանաչված գաղափարախոսի և առաջին թուրք սոցիոլոգի՝ Ջիյա Գյոքալփի (1876-1924) քաղաքական, գիտական, մանկավարժական ու գրական գործունեություն, նրա հայացքների՝ թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Բեմալ-Աթաթուրքի վրա թողած գաղափարական բացառիկ ազդեցության, թուրքիզմի ու պանթուրքիզմի «մանիֆեստ» ու «Հանրագիտարան» հոչակված գյոքալփյան «Թյուրքականության հիմունքները» աշխատության մասին թե՛ թուրքիայում, թե՛ արտերկրում հրատարակվել ու հրատարակվում են բազմաթիվ պատմագիտական, բանասիրական, սոցիոլոգիական, քաղաքագիտական, գիտաբանական ուսումնասիրություններ<sup>1</sup>, հուշագրություն-

<sup>1</sup> Մանավորապես տե՛ս Orhan Asena. *Atatürk ve Ziya Gökalp (Atatürk ve Diyarbakır Üniversitesi, 1981)*, Rıza Filizok. *Ziya Gökalp'in Edebi Eserlerinde Halk Edebiyatı Tesiri Üzerine Bir Araştırma*, Ankara, 1991, Enver Behnan Şapolyo. *Ziya Gökalp. İttihadi Terakki ve Meşrutiyet Tarihi*, İstanbul, 1943, C. Kudret. *Ziya Gökalp*, Ankara, 1963, İsmail Hakki Baltacıoğlu. *Ziya Gökalp*, İstanbul, 1966, Üriyel Heyd. *Türk Ulusçuluğunun Temelleri*, Çev. Kadir Güncay, Ankara, 1979, Mehmet Kaplan. *Ziya Gökalp ve Halk Kültürü Kavramı*, "Kültür ve Sanat", № 1 (6.1973), ss. 17-21, Üriyel Heyd. *Ziya Gökalp'in Hayatı ve Eserleri*. Haz. Cemil Meriç, İstanbul, 1980, Orhan Türkdöğän. *Ziya Gökalp Sosyolojisinde Bazı Kavramların Değerlendirilmesi*, Ankara, 1971, Orhan Şaik Gökyay. *Kitabü İlmî'n-Nâfi Fi Tahsil-i Sarf u Nahv-i Türkî*, "Ulusal Kültür", Sayı 2, Ekim 1978, ss. 172-182, Ali Gevgilili. *Türkiye'de Yenileşme Düşüncesi*, Sivil Toplum, Basın ve Atatürk, İstanbul Üniversitesi, İktisat Fakültesi Mecmuası, Cilt 39, Sayı 1-4, Temmuz 1980-Eylül 1981, s. 1-50, Faruk Kadri Timurtaş. *Tarih İçinde Türk Edebiyatı*, İstanbul, 1981, s. 93-99, Tahir Alangu. *Türkiye Folkloru Elkitabı*, İstanbul, 1983, 135, s. 250-251, Orhan Türkdöğän. *Ulus-Devlet Düşüncüsü Ziya Gökalp*, İstanbul, 2005 (տե՛ս նաև նշված աշխատության աղբյուրների և «գյոքալփագիտական» գրականության ծավալուն ցանկը՝ նույն տեղում, էջ 491-501): Ahmet Kabaklı. *Temellerin Duruşması*, Türk Edebiyatı Vakfı Yayınları, 17. Baskı, İstanbul, 1989, ss. 24, 25, 55, 73, 81, 97, 194, 196, 214, 221, 224, 304, 366, 368, *Modern Türkiye'de Siyasî Düşünce*, Cilt 3, Modernleşme ve Batıcılık, İletişim Yayınları 805, 3. Baskı, İstanbul, 2004, ss. 31, 55, 62, 72-73, 79-80, 90-91, 96-98, 101, 103, 132-133, 174-182, 220, 224-225, 230, 232, 256-257, 305, 308, 321, 324, 352, 355, 362, 383, 385, 396, 398, 429, 478, 491, 616, Kerem Ünüvar. *Ziya Gökalp*, *Modern Türkiye'de Siyasî Düşünce*, Cilt 4, Milliyetçilik, İletişim Yayınları 848, İstanbul, 2002, ss. 28-35: Այս ժողովածուի նաև այլ հրատարակումներում կան Ջիյա Գյոքալփի մասին բազմաթիվ (ավելի քան հարյուր երեսուն) այլ հիշատակումներ և ս. տե՛ս նույն տեղում (ինդեքս), էջ 981:

ներ, հրապարակումներ, հեռուստատեսություններ, թյուրքականություն (Türkçülük) ամսականներ, լեզվաբանական տեսանկյունից քաղաքացիական և «...» ամսականներ, 1998, արաբական

<sup>2</sup> Մանավորապես տե՛ս Adamının Roma Kemal Atatürk Dergisi), Sayı (Aylık ve Yazın Şerafettin Tura Halide Adıvar. Türkçesine. Geç Sayı. 13 (Temm Gerçekleri, Milliyetçi Zıtların 4 քաղաքացիական հոչակումից հետո տարակից է ազդեցության (նահանգապետ պատգամավոր (գյուղատնտեսությունը հրատարակումները) «حسن فانی» Sözlüğü, s. 273- İmparatorluğun (Büyükoşum), Pınar Uslu'nun գյոքալփի երկերը (Ermenistan Mese

ներ, հրապարակախոսական ու գիտահանրամատչելի բնույթի հրապարակումներ<sup>2</sup>:

Դեռևս 1988 թ. թուրքական «Պատմություն և Հասարակություն» ("Tarih ve Toplum") ազդեցիկ հանդեսը տպագրել է տասնամյակներ առաջ գրված, սակայն անտիպ մնացած՝ Զիյա Գյոքալփի լեզվաբանական ու կրոնագիտական հայացքների իմաստավորման տեսանկյունից կարևորվող Հյուսեին Քազըմ Քազըրի<sup>3</sup> «Զիյա Գյոքալփը և «Թուրքականության հիմունքները» ոչ ծավալուն աշխատությունը (գրքի բնագիրը՝ 29-30 տող պարունակող 59 մեծադիր էջ, արաբատառ), որը հրատարակության էր նախապատրաստել ու

<sup>2</sup> Մասնավորապես տե՛ս Mehmet Emin Erişirgil. *Ziya Gökalp. Bir Fikir Adamının Romani, İkinci Basım, İstanbul. 1984, Minber Gazetesinin "Hatib" i M. Kemal Atatürk Olamaz – "Çağdaş Türk Dili" (Dil Derneğinin Aylık Dil ve Yazın Dergisi), Sayı. 12 Şubat 1989, Ziya Gökalp'ı Anlamak ve Yorumlamak, "Türk Dili" (Aylık ve Yazın Dergisi), Sayı 301 Ekim 1976, ss. 492-494, Ahmet Köklügiller, Şerafettin Turan, Betin S. U. Atatürk İnkilâbı ve Ziya Gökalp, Yahya Kemal, Halide Adıvar. İstanbul, 1951, Fahriye İpekçioğlu. Osmanlı Türkçesinden Türkiye Türkçesine. Geçiş ve Sadeleşme Akımları, "Ana Dili" (Dil ve Edebiyat Dergisi) Sayı. 13 (Temmuz-Ağustos) 1999, Mehmet Kaplan. Gökalp'in Tezleri ve Çağdaş Gerçekleri, Milliyet, 3 Kasım, 1974.*

<sup>3</sup> Հյուսեին Քազըմ Քազըրի (1870-1934) - Թուրքական պետական գործիչ, լեզվաբան-բառարանագիր, գրող, հրապարակախոս: Երկրորդ սահմանադրության հուշակումից հետո Թեվֆիկ Ֆիքրեթի և Հուսեին Ջահիդի (Յալչընի) հետ հրատարակել է ազդեցիկ «Թանին» թերթը (1908 թ.): Եղել է Հալեպի և Սալոնիկի նահանգապետ (1909-1911 թթ.): Մանխայից ընտրվել է օսմանյան խորհրդարանի պատգամավոր (1912), նշանակվել նախարարական սարբեր պաշտոններում (Կյուլատնտեսության, առևտրի, վաքըֆների նախարարություններում): Կյանքի օրոք հրատարակված գրեթե բոլոր գրքերը ստորագրել է «Շեյխ Մահսուն-ի Ֆանի» (شیخ محسن فانی) [տե՛ս Seyit Kemal Karaalioglu. *Resimli Türk Edebiyatçılar Sözlüğü*, s. 273-274: Տե՛ս նաև Kadri Hüseyin Kazım. *Balkanlardan Hicaza, İmparatorluğun Tasfiyesi, 10 Temmuz İnkilâbı ve Netayici (Sadeleştiren: Kudret Büyükoşkun)*, Pınar Yayınları: 60, Yıldızlar Matbaacılık A. Ş., İstanbul, 1992, 213 s: Սուլյն գրքի երրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է «Հայաստանի հարցին» (Ermenistan Meselesi). տե՛ս նույն տեղում, էջ 38, 63, 72, 90, 123-153]:

ծանոթագրել Իսմայիլ Քարան<sup>4</sup>:

Օսմանյան կայսրության մայրամուտի և թուրքիայի Հանրապետության առաջին տասնամյակների մշակույթի ու քաղաքական պատմությանն առնչվող ամենատարբեր, իսկ կոնկրետ Զիյա Գյոքալփի գործունեությանն ինչ-ինչ աղբյուրներ ունեցող գրեթե ցանկացած թեմա լուսարանելիս պարզապես անհնար է չհիշատակել նրա կրտսեր ժամանակակցին, մերձավոր գործընկերոջը և հետևորդին՝ գրող, գրականագետ, պատմաբան ու քաղաքական գործիչ Մեհմեդ Ֆուադ Բյոփրյուլուն (1890-1966), որի անվան հետ էր կապում «Թյուրքականության հիմունքների» հեղինակը բուն թուրքիայում ակադեմիական թուրքագիտության կայացումը և եվրոպական ճանաչում ստանալու ֆենոմենը<sup>5</sup>: Ինչպես հայտնի է, Մ. Բյոփրյուլուն եղել է Ստամբուլի Համալսարանի գրականության ֆակուլտետի պրոֆեսոր (1913-1943) և դեկան, ընտրվել է ԹԱՄԺ-ի պատգամավոր կարսից (1934), իսկ հետագայում՝ Ստամբուլից (1946), Դեմոկրատական կուսակցության իշխանության տարիներին դարձել է թուրքիայի Հանրապետության արտգործնախարար (1950-1957)<sup>6</sup>: Նա գրական կյանք էր մտել որպես բանաստեղծ, սակայն նրան եվրոպական ճանաչում էր բերել դեռևս 1918 թ. լույս տեսած ու հետագայում բազմիցս վերահրատարակ-

<sup>4</sup> Տե՛ս İsmail Kara. Hüseyin Kazım'ın Yayınlanmamış Bir Eseri: "Ziya Gökalp ve Türkçülüğün Esasları", "Tarih ve Toplum", Şubat 1988, ss. 47-51, ինչպես նաև նույն հանդեսի Հաջորդ երեք համարներում. Hüseyin Kazım Kadri. Ziya Gökalp ve Türkçülüğün Esasları, (Mart - Nisan - Mayıs), 1988: Տե՛ս նաև նույնի՝ Ziya Gökalp'in Tenkidi, İstanbul, 1989, 171 s.

<sup>5</sup> Տե՛ս Ziya Gökalp. "Türkçülüğün Esasları", İstanbul, s. 11: Հունգարացի թուրքամետ արևելագետ, պրոֆ. Լ. Ռաշոնյի Մեհմեդ Ֆուադ Բյոփրյուլուն անվանում է «թուրքական անցյալի ամենահիմնարար հետազոտող» (տե՛ս La szlo' Ra sonyi. Tarihte Türklük, Üçüncü Baskı, Türk Kültürünü Araştırma Enstitüsü Yayınları: 126, Ankara Üniversitesi Basımevi, Ankara, 1993, s. 259): Բյոփրյուլուն այլ անդրադարձները տե՛ս նույն տեղում, էջ 33, 197, 259, 292, 293, 298, 338, 339, 350, 352, 357, 358, 360, 362, 373, 379: Լ. Ռաշոնյի Գյոքալփին անդրադարձները տե՛ս նույն տեղում, էջ 254, 258, 259, 276, 378: Բյոփրյուլունի (Բյոփրյուլուզադե) գործունեության ու մատենագիտական տեղեկատվության մասին առավել մանրամասն տե՛ս Orhan F. Köprülü. Fuad Köprülü'nün Hayatı ve Eserleri - M. Köprülü. Türk Edebiyatı Tarihi (Gerekli Sadeleştirmeler ve Notlar İlâvesiyle Yayınlayanlar: Orhan F. Köprülü ve Nennin Pekin), 3. Basım, İstanbul, 1981, s. XVIII-XXIV: Մեհմեդ Ֆուադ Բյոփրյուլունի աշխատանքներին հայագետաբանասերների անդրադարձները տե՛ս Ամիրյան Խ., Թուրքայեզու Հայ աշուղներ և Մ. Ֆ. Բեոփրյուլուն (Սովետական գրականություն, 1976, № 73), Թուրքալե-ն. Պ., Փարսիզ, 1993: Այս գլխի մասին բանասիրության թեկնածու Վ. Մաղալյանի ծավալուն գրախոսությունը տե՛ս Բանբեր Երևանի Համալսարանի, 1997, N 3 (93), էջ 193-199:

<sup>6</sup> Դեմոկրատական կուսակցության իշխանության տարիներին Ֆ. Բյոփրյուլունի որպես թուրքիայի արտգործնախարարի մասին մանրամասն տե՛ս Olaylarla Türk Dış Politikası, Cilt: 1 (1919-1973), Ankara, 1977, ss. 237-295:

ված «Առաջին սուֆիները թյուրք գրականության մեջ»<sup>7</sup> ծավալուն մենագրությունը, որի առաջին մասը նվիրված է Ահմեդ Եսեվիի<sup>8</sup>, իսկ երկրորդ մասը Յունուս Էմրեի<sup>9</sup> կյանքի, ստեղծագործության ու թուրք գրականության վրա թողած ազդեցության հարցերի լուսաբանմանը: «Թյուրքականության հիմունքներում» Ջիյա Գյոքալփը նույնպես սուֆիական թյուրքալեզու գրականության ներկայացուցիչներից հիշատակում է հատկապես Յունուս Էմրեի անունը՝ որպես թուրքական ժողովրդական ավանդույթներին հավատարիմ մնացած ու հասարակ ժողովրդի կողմից սիրված բանաստեղծի<sup>10</sup>: Հայտնի է նաև, որ Ջ. Գյոքալփը (այլ աղբյուրների և ուսումնասիրությունների թվում) Գյոքալփը (այլ աղբյուրների էլ օգտագործել է նաև իր «Թուրքական քաղաքակրթության պատմությունը» գրելիս<sup>11</sup>:

1956 թ. (ծննդյան 80-ամյակի կապակցությամբ) հատուկ հրատարակվել է Ջ. Գյոքալփի և նրա թանգարանի մասին ժողովածուն<sup>12</sup>, որտեղ ամփոփվել են հուշեր, թուրքիայի տարբեր քաղաքներում կարդացված զեկուցումներ ու մամուլից արտատպված հրապարակումներ թյուրքականության գաղափարախոսի մասին: Հեղինակների թվում էին Գյոքալփի ժամանակակիցները, մերձավորները, կրտսեր գործընկերներն ու գաղափարական հետևորդները, ինչպես թուրքիայի ներքին գործերի նախկին նախարար, պրոֆ. Մեհմեդ Էմին Էրիշիրգիլը, որը Անկարայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում կայացած Ջ. Գյոքալփի հիշատակի հանդիսությունը ելույթ էր ունեցել Ջ. Գյոքալփի մանկավարժական հայացքների մասին ծավալուն զեկուցմամբ<sup>13</sup>, Գյոքալփի փեսան՝ Ալի Նյուզհեթ Գյոքսելը<sup>14</sup>, որը գյոքալփագետներին հայտնի է նաև որպես թյուրքականության գաղափարախոսի անտիպ գործերի և նամակների հրատարակող, դոկտոր Ջահիդ Թանյուլը<sup>15</sup>, Ստամբուլի համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի սոցիոլոգիայի

<sup>7</sup> Տե՛ս Fuad Köprülü. Türk Edebiyatında İlk Mutasavvıflar, 444 s.

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 11-180:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 183-357: Գյոքալփի՝ Յունուս Էմրեին անդրադարձների մասին տե՛ս Սաֆարյան Ա., Ջիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», Ե., 2012, էջ 104:

<sup>10</sup> Տե՛ս Türkçülüğün Esasları, ss. 24, 28, 32, 97, 98, 108:

<sup>11</sup> Տե՛ս Yusuf Çotuksöken. Türk Medeniyeti Tarihinin Yeni Baskısının Eleştirisi-Ziya Gökalp, Türk Uygartığı Tarihi, s. 318:

<sup>12</sup> Doğumu'nun 80. Yıldönümü Dolayısıyla Ziya Gökalp ve Açılan Ziyagökalp Müzesi, Diyarbakır Tanıtma Dergisi Neşriyatı Nu.: 3, Gökalp Külliyyatı Nu.: 2, İşıl Matbaası, İstanbul, 1956.

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 48-62:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 62-68, 87-89: Göksel, Ali Nüzhet. Ziya Gökalp. İstanbul: Vartık yayımları, 1963, Ziya Gökalp'in Hayatı ve Malta Mektupları, (1931, A. N. Göksel), Ziya Gökalp'in Neşredilmemiş Yedi Eseri ve Aile Mektupları (1956, A. N. Göksel):

<sup>15</sup> Տե՛ս Doğumu'nun 80. Yıldönümü Dolayısıyla Ziya Gökalp ve Açılan Ziyagökalp Müzesi, ss 68-71, 79-82:

պրոֆեսոր, դոկտոր Ֆրանզ Բրոքհոլցը Զիյաէդդին Ֆահրի Բեյը<sup>16</sup>, Հայտնի բանաստեղծ, արձակագիր ու լրագրող Օրհան Սեյֆի Օրհոնը<sup>17</sup>, պրոֆ. Ջավիդ Օրհան Թյութենգիլը<sup>18</sup>, XX դ. թուրքական արձակի և լրագրության ամենանշանավոր դեմքերից մեկը՝ Յաքուբի Քադրի Քարասամանողլուն<sup>19</sup>, Ջ. Գյոքալփի նախկին դասախոս, պրոֆ. Մեհմեդ Ալի Այնին<sup>20</sup> և ուրիշներ: Հատկապես հետաքրքիր է Մ. Քյոփրյուլյուրի «Զիյա Գյոքալփ» վերնագրված հրատարակումը, որտեղ հեղինակը ներկայանում է պարզապես որպես «Համալսարանական մոտ ընկեր»<sup>21</sup>, բայց իրականում՝ Գյոքալփյան պանթուրքիստական-գաղափարակախոսական ժառանգությունից շատաքով: Գյոքալփին համեմատելով Ֆիխտերի հետ՝ Քյոփրյուլյուն պնդում է. «Զիյայի՝ Թուրքիայում կատարած դերն ավելի կարևոր է, քան Ֆիխտերի դերը Գերմանիայում»<sup>22</sup>, իսկ թյուրքականության գաղափարախոսին համեմատելով նրա և Ալթաթուրքի «գաղափարական հոր»՝ Նամըք Քեմալի հետ՝ հանգում է եզրակացության, որ եթե Նամըք Քեմալի ազդեցությունը եղել է Թուրքիայի սահմաններում, ապա Զիյայինը, «անցնելով այդ սահմանները՝ տարածվել է Թուրքական աշխարհի (այսինքն՝ թյուրքալեզու ժողովուրդների բնակություն-Ս.Ա.) այլ տարածաշրջաններում»<sup>23</sup>:

Հետևորդների կողմից Զիյա Գյոքալփի անտեսագիտական հայացքների արժևորման ու զարգացման տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում նաև թյուրքականության գաղափարախոսի մահվան 25-ամյակի կապակցությամբ Ստամբուլի Համալսարանի անտեսագիտության ու սոցիոլոգիայի ինստիտուտի մատենաշարով հրատարակված, բայց զարմանալիորեն տասնամյակներ շարունակ խորհրդային մասնագետների ուշադրությունից վրիպած Օսման Թոլգայի «Զիյա Գյոքալփը և նրա անտեսագիտական հայացքները» գրքույկը<sup>24</sup>: Իհարկե, գրքույկի վերնագրի՝

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 71-74, 77-79, 89-91:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 75-76: Զիյա Գյոքալփի՝ Օրհան Սեյֆիին տված գնահատականի մասին տե՛ս *Türkçüülüğün Esasları*, s. 10-11, ինչպես նաև Սաֆարյան Ա. Նշվ. աշխ., էջ 101-102:

<sup>18</sup> *Sb'u Doğumu'nun 80. Yıldönümü Dolayısıyla Ziya Gökalp ve Açılan Ziyagökalp Müzesi*, s. 82-84, ինչպես նաև Prof. Dr. C. O. Tütengil, *Gökalp'a İlişkin Yeni Notları, Sosyoloji Konferansları*, XIV kitap, 1976.

<sup>19</sup> *Sb'u Doğumu'nun 80. Yıldönümü Dolayısıyla Ziya Gökalp ve Açılan Ziyagökalp Müzesi*, s. 93-94.

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 104-107:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 120:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 121:

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Osman Tolga, *Ziya Gökalp ve İktisadi Fikirleri*, İstanbul, 1949: Հարկ է նշել, որ Օսմանյան կայսրությունում սոցիոլոգիայի առաջին ինստիտուտը (*İçtimaiyat Darülmesaii*) հիմնվել է 1916 թ. Զիյա Գյոքալփի ու նրա օգնական Նեմէթդեհին Սադրի (հետագայում «Աքչամ» թերթի հիմնադիր, ԹԱՄԺ-ի պատգամավոր, ապա Թուրքիայի արտգործնախարար) կողմից:

բավական լայն թեմատիկ շրջանակներ լուսարանելու հավակնությունը պարզապես անհնար էր իրականացնել վերոհիշյալ հրատարակության փոքր ծավալում (ընդամենը՝ 40 էջ), այսուհանդերձ, հարկ է նշել, որ այդ աշխատանքն իրականում կոնկրետ ժամանակի պահանջներից ելնելով՝ սոցիոլոգ, հրապարակախոս ու բանաստեղծ Գյոքալփի թուրքական տնտեսության զարգացման ու «թուրքացման» ուղիների փնտրտուքի բավական հանգամանալից նկարագրության և «ազգայնական-պետականամետ» դիրքերից վերլուծության մի փորձ է, որը մասնավորաբար ուշագրավ է նաև երկրորդ համաշխարհային պատերազմից հետո խորհրդաթուրքական հարբերությունների աննախադեպ լարվածության պայմաններում թուրքիայում ծավալվող հակախորհրդային ու հակառուսական քարոզչության զինանոցում գյոքալփյան դրոյթները մեկ անգամ ևս օգտագործելու հնարավորության փաստի առումով: Զ. Գյոքալփը բազում անդրադարձներ ունի թուրքականության գաղափարախոսությանը, Օսմանյան կայսրության վերջին ու թուրքիայի Հանրապետության կայացման դարաշրջանների քաղաքական ու մշակույթի պատմությանը, մասնավորապես երիտթուրքերի կառավարման, քեմալական բարեփոխումների և արևմտականացման գործընթացների հիմնահարցերին նվիրված ամենատարբեր աշխատություններում, որոնք լույս են տեսել եվրոպայում և ԱՄՆ-ում (Արևմուտքում անգլերեն ու ֆրանսերեն հրատարակվել են նաև վերոհիշյալ հիմնախնդիրներին նվիրված՝ թուրք հեղինակների մի շարք գործեր)<sup>25</sup>:

Փաստ է, որ այսօր էլ գյոքալփյան թեմատիկան արդիականանում է նորոմանականության կուրսի որդեգրման, իսլամի քաղաքականացման փորձերի, թուրքիայում կրոնական և ազգայնական դաստիարակության ու գիտակրթական համակարգի վերակառուցման<sup>26</sup>, թուրք կանանց իրավունքների համար մղվող պայ-

<sup>25</sup> Մասնավորապես տե՛ս Nuri Eren. *Turkey Today - and Tomorrow. An Experiment in Westernization*, Frederick A. Praeger, Publisher, New York-London, 1963, pp. 15, 178, 217. Ziyaettin Fahri Findikoğlu. *Ziya Gökalp: Sa Vie et Sa Sociologie*, Paris, 1963. Uriyel Heyd. *Foundation of Turkish Nationalism: The Life and Teachings of Ziya Gökalp*, London: Luzak, 1950. M. Philips Price. *A History of Turkey: From Empire to Republic*, George Allen & Unwin Ltd, London, The MacMillan Company, New York, 1956, pp. 125, 129, Frederik W. Frey. *The Turkish Political Elite*, Massachusetts Institute of Technology, Cambridge, 1965, pp. 29, 39, 76, 106, 114, Yahya Armajani. *Middle East. Past and Present*, Prentice-Hall, Inc., Englewood Cliffs, New Jersey, 1970, pp. 241, 271-272, 290, Abid A. Al - Marayati and others, *The Middle East: Ist Governments and Politics*. Duxbury Press. A Division of Worldworth Publishing Company, Inc. Belmont, California, 1972, pp. 101-106. Kemal H. Karpat. *Turkey's Politics. The Transition to a Multy-Party System*. Princeton- New Jersey, Princeton University Press, 1959, pp. 20, 25-27, 30, 50, 63, 71, 79, 252, 409, 455. Bernard Lewis. *The Emergence of Turkey*. Second edition, Oxford University Press, London- Oxford - New-York, 1968, pp. 231, 351-352, 358, 403, 415.

<sup>26</sup> Մանրամասն տե՛ս Safaryan A. *Ziya Gokalp On National Education (Iran and the Caucasus, vol. 8.2, Brill, Leiden- Boston, 2004, pp. 219-229)*:

քարի («Թուրքական ֆեմինիզմի»)՝<sup>27</sup> Թուրքական մտավորականության արժեքային մարտահրավերներին պատասխանի փնտրտուքի, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո «Թուրքական աշխարհում» ծավալվող քաղաքական տարբեր գործընթացների, լեզվամշակութային քաղաքականության վերաիմաստավորման միանգամայն նոր պայմաններում: Փաստ է նաև, որ Թուրքական գյոքալփազիտությունը, որպես կանոն, բնորոշ է խիստ միտումնավորությունը՝ հատկապես ազգային ու կրոնական փոքրամասնությունների հիմնահարցերի և գյոքալփյան թեմատիկայի հատման տիրույթը լուսաբանելիս:

## ИЗ ИСТОРИИ ТУРЕЦКОГО ГЕКАЛПОВЕДЕНИЯ

САФАРЯН А. В.

Резюме

И в Турции, и на Западе периодически публикуются работы турецких социологов, историков, философов, литературоведов, лингвистов, культурологов, посвященные жизни, политической и педагогической деятельности, а также поэзии виднейшего идеолога тюркизма (тюркизма и пантюркизма) З. Я. Гекалпу (1876-1924) и, в частности, фундаментальному труду "Основы тюркизма" (1923). Гекалповедческая тематика актуализировалась после распада СССР, в условиях принятия в Турции курса неосманизма (поисков турецкой интеллигенцией ответов на идеологические вызовы), нового восприятия "турецкого феминизма", новых процессов и переосмысления культурно-языковой политики в "тюркском мире". Турецкому гекалповедению присуща крайняя тенденциозность, особенно в освещении проблематики национальных и религиозных меньшинств.

<sup>27</sup> Մանրամասն տե՛ս Safaryan A. *On the History of Turkish Feminism (Iran and the Caucasus)*, vol. 11.1, Brill, Leiden-Boston, 2007, pp. 141-152):



---

FROM THE HISTORY OF GÖKALP STUDIES IN TURKEY

A. SAFARYAN

Abstract

Works of Turkish sociologists, historians, philosophers, philologists, linguists and culture experts devoted to the biography, political and pedagogical activities as well as to the poetry of the most famous ideologist of Türkçülük (Türkiyecilik ve Turancılık) Ziya Gökalp and his fundamental work "The Principles of Turkism" are periodically published in Turkey and in the West. The subject of Gökalp studies became actual after the collapse of the USSR, particularly with reference to the adoption of the concept of Neo-Ottomanism in Turkey, search of responses to the mental challenges by Turkish intellectuals, new perceptions of "Turkish feminism", new processes and reformulation of the cultural-linguistic policy in the "Turkic world". Extremely tendentious attitude in the interpretation of the problems of national and religious minorities, is an inherent characteristic feature of the Gökalp studies in Turkey.